



41. ՍԵՅՐԻ ՕՅԻ ԽԵԶՆԹԸ

Ժամանակով մե շատ ախկատ կնիկ ա հըլնում: Էս ախկատ կնիկը մե տղա ա ունենում, հուրիչ բան չուներ:

Մեր ու տղա աբրում ին մե քոնձաղում, ո՞նչ պոլ ուներ, ո՞նչ պատալով: Մերը խալի դոները վաճք էր անում, հինքն էլ, տղեն էլ աբրում ին:

Զանսիբ ին, հըմա սրտբաց ին, հիրանց բնխտից չին գանգտվում: Տղեն էլ օրեօր մեծանում էր: Մեծըցավ, հելավ եքա տղա:

Մե օր էլ մորն ասավ.—Աղե՛, էրկու խաց թխա՛, առնեմ էթամ մե յանի, աշխատեմ, բերեմ աբրենք, դու մեխկ ես: Պառվցեր ես, էլի հուրիչի վաճքն ես անում:

Մերը էրկու գարեխաց ա թխում, տղեն վերցում ա ու էթում: Շատ ա էթում, թե չիչ, Աստված ջիդա, մութը տալում ա վրեն, մե սարի տակ գլոխը դնում ա մե սալի ու քնում: Տղեն, որ էստեղ քնում ա, գիչերը էյրազ ա տենում: Զարթնում ա, էյրագին չի հավատում, էլի յա քնում: էլի յա էյրազ տենում, էլի յա զարթնում: Մե խոսկով իրեք խետ էտ էյրազը տենում ա ու զարթնում: Որ զարթնում ա, լուսը բացվում ա:

Տղեն ասում ա.—Լուսը բացվավ, ստուգեմ, տենամ՝ էյրազս դո՞ւզ ա:

Ինչ էր ըտու էյրազը:

էյրագին մե կնիկ էր գալում, ասում էր.—Տղա՛, էտ սալը վերցո՛ւ, տակը մե խատ սասկուկ օց կա, սիրտնիկ օց ա: էտ օցը հասարակ օց չի, սեյրի օց ա: Օցը կըճիսես, կանես էրկու կտոր, պոչի յանը կըտանես, գլխի յանը կըթողես: Որ կըտանես, էտ օցի պոչը կըթաղես դռան հատաչը, ամեն օր կըջրես: Կըբուսի մե չինարի ծառ, օրը օրի վրա կըբարցրանա, հա կըջրես: Ըտուց էտո ինչ հըլնի, քո բնխտից:

Տղեն սալը շուռ տվեց, տեսավ մե խատուկ, սիրտնիկ օց: Դանակը ջեպից խանեց, պոչի յանը կզրեց, փաթըթեց լանյուղի մեչ, սալը դրեց տեղը, ետ դառցավ:

Մերը որ տղին տեսավ, ծծղալով խարցուց.— Ղուրբան իմ աշխատող տղին, ի՞նչ ես բերե, շատ աշխատի՞ր, նեղացե՞ր ես, արի նստի՛, դինջցի՛:

Տղեն մորը պատմեց էյրագը: Մերը էտ տեսակ բաների շուտ էր հավատում: Բերին տղի խեղ փոս փորին, օցը խորին, ջուր լցին վրեն, գացին քնան:

Հառավոտ, որ վեր կացան, տեսան ծառ ա բուսե, չինարի ծառ, բոյը՝ մե թիգ: Մե ամիս օրը մե խեղ ջրին: Ծառը հելավ մե եքա: Ծառը ծաղկավ:

Տղեն մե օր աշխատանքից շուտ տուն էկավ, դուռը բացեց, գնաց ներս, տեսավ տունը ավլուկ, խորթուկ, ճաշը էփուկ: Նստավ ճերավ:

Հիրկուն մերը էկավ, տեսավ, զարմացավ: Մերը կարծեց տղեն ա ավլե, մաքրե, ճաշը էփե, տղեն կարծեց՝ մերն ա արե: Էսեսց հընցավ մե շափաթ:

Մե օր էլ տղեն մորն ասավ.— Ա՛յ մեր, էս ի՞նչ բան ա, էս մե շափաթ ա լվածք չե՞ս անում, որ շուտ ես գալում, ճաշ էփում, տունը ավլում, մաքրում, ջուրը բերում:

Մերը մնաց շիվար, ասավ.— Բալա՛, բա ես էլ հիմանում եմ, թե դո՞ւ ես մաքրում:

— Ըհը, — ասավ տղեն, — ըստե մե բան կա:

Հէքուց գործի չեմ էթա, կրփաթըթվեմ խսիլը, կրկայնեմ դռան հետևը, տենամ՝ էս ո՞ր հարևանն ա մեր տունը մաքրում, ավլում, թափում:

Տղեն փաթըթվավ խսիլը կայնավ: Մեկ էլ տեսավ մե սիրուն, շարմաղ ախճիկ, գլոխը չրաղվանի նման լուս ա տալում: Մտավ տունը, ավլեց, մաքրեց, ժեխը թափեց, մտավ ծառի մեջը:

Տղեն հիշկաց ծառին, տեսավ ախճիկը մտավ ծառի մեջը, հմա ծառի վրեն մե խնձոր կա: Գնաց խնձորը քաղեց, տարավ բազառ, որ ծախա:

Մե վաճառական, որ խնձորը տեսավ, հիմացավ, որ անմահական խնձոր ա, ասավ.— Տղա՛, խնձորիտ ի՞նչ տամ:

Տղեն ասավ.— Ինչ կըտաս, տո՛ւր:

Վաճառականն ասավ.— Հազար մանեթ կըտամ:

Տղեն զարմացավ, ասավ.— Վաճառական՛, խնննքի ժամանակ ես քթե, ի՞նչ ես տալում, տո՛ւր:

Վաճառական ասավ.— Նննք չեմ անում, դուզ եմ ասում:

Տղեն ասավ.— Որ դուզ ես ասում, փողը տո՛ւր:

Վաճառականը հաշվեց հարուր խատ տասսանոց ոսկի, տվեց տղին: Տղեն հետեն հիշկալով փախնում ա, որ վաճառականը չը-

փոշմանի, վաճառականն էլ հիշկալով փախնում ա, որ տղեն չը-
փոշմանի:

Էրկսով էլ մտածում են, որ մեկը մեկին խափեր ա:

Տղեն ոսկին բերեց, մորը տվեց, հիշկաց ծառին, տեսավ՝ էլի մե
պատի խնձոր կա:

Ջքաղեց, ասավ.—Թո մնա, խասնի:

Հառավոտ վեր կացավ, դուս էլավ, հիշկաց ծառին, տեսավ
խնձորը խասեր ա: Քաղեց տարավ, էլի ծախեց հազար մանեթի:
էկավ տուն, տեսավ տունը ավլուկ, մաքրուկ, ճաշը էփուկ: Ճերավ,
պարկավ տեղի վրեն, հիրկուն մերը էկավ տուն:

Տղեն փողը մորը տվեց, ասավ.—Ա՛յ մեր, էլ լվածքի չէթաս, բոլ
ա, մենք չմտիք չենք:

Մերն ասավ.—Մեջու ճիսատ ունեմ, հէքուց էթամ պրծնեմ,
գամ, էլ չեմ էթա: Նստեմ մեր դուռը, մեր ծառը պախեմ, մեր խնձո-
րը չըգողնան, բոլ ա:

Առավոտ մերը գնաց լվածքի, տղեն, փաթըթված խսիլը, կայ-
նավ դռան հետևը:

Ախճիկը ներս մտավ, թե չէ, տղեն խսիլի մըչից դուս էկավ, դու-
ռը դրեց, մեշկը դեմ արավ դռանը, ասավ.—Սեյրի՛ օցի ախճիկ, էլ
չեմ թողի էթաս: Դու իմն ես, ես՝ քոնը:

Ախճիկն ասավ.—Ձէ՛, հրյա շուտ ա, մե քանի օր էլ սպասա՛:

Տղեն ասավ.—Որ ընձի չըլսաս, կեթամ ծառը կըկղրեմ: Դու էլ
ծառի մեջ չըմտնես, մորս խառսնութուն կանես:

Ախճիկը վախեցավ, թե տղեն ծառը կըկղրա, էլ ձեն չարավ:
Տղեն թևից բռնեց, բերեց նստցուց չեչի վրեն: Տղի մերն էկավ, տե-
սավ տանխնգած լուսնակի նման մե ախճիկ թևը քցե տղի վիզը,
նստե: Ջարմացավ, մնաց կայնուկ: Ուառը, որ տեսավ կիսուրն
էկավ, թևը մարթի վզին քցուկ տեսավ, ամոթու կարմրավ, թողեց
մարթին, էկավ փաթըթվավ կիսուրի վիզը, ձեռը պաչեց, կայնավ:

Տղեն ասավ.—Ա՛յ մեր, էտ քո խառսն ա:

Մերը շատ ուրխցավ, սկսին ուրախ արբել, նոր տներ շինին,
հարստացան:

Պառավը սաղ օրը դռանն էր նստում, խնձորի ծառը պախում:
Ուառը տան գործն էր անում, լվում, թափում, մարթն էլ օրական
մե խնձոր տանում էր բազառը ծախում, օրը հազար մանեթ բե-
րում:

Մե օր ախճիկը տունը ավլում ա, դուս ա գալում, որ բակը ավ-
լա, հերեսի շողը տարածվում ա չորս կողմը: Ախճիկը բանից բեխա-
բար հիրա խըմար խանգիստ դուռն ա ավլում: էտ երգըրի ջահել
թաքավորը, չորերը փոխուկ, էտ յանը ման էր գալում: Հանգարց

ախճկա շառավելները հրնգան թաքավորի հերեսին: Հիշկաց, ի՞նչ տենա: Մե հուրի-փերի դուռ ա ավլում, մե պառավ էլ նստեր ա չինարի ծառի տակը: Տնից դուս էկավ մե ջահել տղա, մտորցավ ծառին, մե խնձոր քաղեց, դրեց ջերը գնաց:

Թաքավորը տղի հետևից գնաց բազառը:

Վաճառականը էկավ, որ խնձոր առնի, թաքավորը մոտցավ, ասավ. — Երիտասար՛թ, էտ խնձորը տո՛ւր ընձի, ես էրկու հազար մանեթ կըտամ: էտ խնձորը ես առնում եմ թաքավորի խըմար:

Տղեն ասավ. — Թաքավորի խըմար ես առնում, վիր խըմար, բան չունեմ ասելու, հըմա էրեկ էս մարթին խոսկ եմ տվե, տամ էս մարթին, քո ուզածն էլ հէքուց կըբերեմ:

Թաքավորը մտածեց ու ասավ. — Լա՛վ, թո հէքուց հըլնի:

Տղեն խնձորը տվեց վաճառականին, ետ դառցավ էկավ տունը: Թաքավորը նորից ետ դառցավ տղի հետևից ցըռթող-ցըռթող էկավ, ըտրա տան բոլորը պըտըտաց, ետ դառցավ գնաց:

Գեղեցկուհին աչկի հնոնչից չէր էթում: Քչերը չըկառցավ քնի: Քչերը հելավ մե տարի: Հառավոտ շուտ հելավ գնաց տղի տան մոտով, Սեյրի օցի ախճկան մեկ էլ տեսավ, գնաց տղի ճամբի վրեն կայնավ:

Տղեն խնձորը բերեց տվեց ըտրան:

Խանեց էրկու հազար մանեթ տվեց, տղեն չվերցուց:

— Բա՛լի խիվանդ կա թաքավորի տանը, որ ուզում ա, ամոթ չի՞ խիվանդի խնձորն էլ թանգ ծախեմ, — ասավ տղեն, — բա էլ խիխճ, Աստված չըկա՞:

Թաքավորը խնձորն առավ գնաց պալատ, կանչեց վազրին, վաքլին, սինոթներին ու ասավ. — Իմ երգրում մե պառավի տղա չինարի ծառ ունի, էսենց անմահական խնձոր ա բուսում վրեն, ձեզ-նից վո՞րն ա տեսե էսենց խնձոր:

Ոնձորը վերցրին ձեռները, երթում ճերան, որ հառնչի անքամ են էսենց խնձոր տենում:

— Դուք հըլա խնձորի վրեն եք գարմանում, բա որ էտ պառվի խառսին տենաք, ինչ կասեք: Արևի նման լուս ա տալում, լուսնակին ասում ա՛ դու դուս մի՛ արի, ես բոլ եմ: Դուք դաբուկ կանե՞ք, որ էտ տեսակ ախճիկը մնա մե քնձոտտ ջեղացու ձեռին: Լավ չի՞ հըլնի մե հնարքով մառթին կորցնենք, հիրանն էլ բերենք, թաքուհի դառցնենք:

Վազիրն էլ, վաքլին էլ, սինոթներն էլ համաձայնվան ու թաքավորին խորութ տվին, որ վազիրի խես հնարքներ մտածեն, տղին մե էնենց բան ասեն, որ չըկանա կատարա, յա մե տեղ էթա չըգա,

կնիկը ձեռից առնեն, ծառն էլ քոքով խանեն բերեն, տնգեն թաքավորի ակուշկի հառեչը:

Թաքավորը մարթ հղրկեց, տղին կանչին, էկավ: Որ տղին կանչին, սիրտը կասկած հընգավ, հընչի՞ր բղի թաքավորը կանչա:

Կնիկն ասավ.— Էրևում ա խնձոր ա ուզում: Մի՛ վախեցի, գնա՛: Տղեն գնաց, գլոխ տվեց թաքավորին, ձեռները դրեց դոշին, կայնավ քունջը:

Թաքավորն ասավ.— Ա՛յ տղա, գիղաս չեզի հընչի՞ր եմ կանչե:

Տղեն ասավ.— Թաքավորն աբրած կենա, հո՞ւստ հիմանամ:

Թաքավորն ասավ.— Կէթաս, որդեղից հըլնի, էնենց մե խատ խացի սուֆրա կըբերես, մեչը լինքը ուտելիք ու խմելիք, որ իմ սաղ ժողովուրթն օխտ օր ուտա, խմա, էլի սուֆրեն լինքը հըլնի:

Տղեն մնաց շիվար: Էտենց բան ո՞վ ա լսե:

Թաքավորն իրեք օր ժամանակ տվեց, տղեն էկավ տուն, ժանգոներն էնենց էր կախե, որ մերը տեսավ, սիրտը մխկտաց, ասավ.— Բալա՛ ջան, ի՞նչ ա պատահե, խո խիվանդ չե՞ս:

— Ձէ՛, աղե՛ ջան, խիվանդ չեմ, հըմա թաքավորն էնենց բան ա ասե, որ չեմ կանա կատարի, գլոխ կըկդրա:

Կնիկն էկավ, խարցուց.— Թաքավորն ի՞նչ ասավ:

— Թաքավորն էնենց մե սուֆրա յա ուզում, որ մեչը լինքը ուտելիք ու խմելիք հըլնի, սաղ ժողովուրթը օխտ օր ուտա, խմա, էլի սուֆրեն լինքը հըլնի:

Սեյրի օցի ախճիկն ասավ.— Մա՛րթ, մի՛ տխրի, նիյաթներտ մի՛ կախա, ըտուց հեչտ բան չըկա: Արխային քնի՛, առավոտ շուտ հելի գնա՛, սալը վերցո՛ւ, էնտեղ թողած կտորն իմ մերն ա, ասա՛, մերս չեզի սուֆրա կըտա, կըբերես:

Տղեն հառավոտ խաքավ թնձան շորերը, խեձավ ձինը, գնաց ճեսօրին խասավ տեղը, սալը վերցուց, տեսավ մե դուռ բացվավ, մտավ ներս, տեսավ մե խորոտ, քառասուն տարեկան կնիկ նստուկ ա:

Կնիկը, որ տղին տեսավ, տեղից հելավ, փաթըթվավ տղին, հերեսները պաչեց, ասավ.— Բարով ես էկե, փեսա՛ ջան, իմ ախճիկը իմա՞լ ա:

— Ախճիկը շատ լավ ա, ա՛յ մեր, հըմա մեր գլխին մե փորցանք ա էկե: Թաքավորն էս տեսակ մե սուֆրա յա ուզում, թե չըտանեմ, գլոխ կըկդրա:

Սեյրի օցն ասավ.— Ըտուց հեչտ բան չըկա, փեսա՛ ջան, մի՛ մտածա:

Փեսին տվեց մե խատ օցի շապիկ, փեսեն ետ դառցավ:

Երորթ օրը տղեն վերցուց օցի շապիկը, գնաց Թաքավորի մոտ, ասավ՝ բերե՛ր եմ:

Թաքավորը ջնո գցեց, ինչքան մարթ կա քաղաքը, թո գա ճաշի:

Ժողովուրթը Հաֆկվավ պալատի չորսբոլորը: Տղեն օցի շապիկը խանեց, դառցավ սուֆրա, հերկնցավ, տասը տակ կտոտվավ պալատի չորս կողմը, ստոլի նման տարածվավ, ժողովուրթը ճերավ, խմավ, գնաց, նորերն էկան, նստան: Օխտ օր, օխտ քչեր ճերան, խման, էլի սուֆրեն լինքն ա:

Թաքավորը տեսավ, որ էս չելավ, վազրի խետ նստավ խորուրթի:

Սորուրթ արին, որոչին.—Բղի բերես մե ճութ խավոդ, կախես բազառի մեչը, էթոդ գալոդն ուտա, էլի չվերջանա:

Տղեն էլի նիյաթ, մնլուլ էկավ տունը, կնգան ասավ:

Կնիկն ասավ՝ բան չըկա, գնա՛ մորս մոտը:

էտ էլ ա բերում, տալում Թաքավորին: Իչքան ճերան, ճութն էլի սաղ:

Թաքավորը տեսավ, որ էս էլ չելավ, տղին ասավ.—Ես հիմանում եմ, թե ըտոնք հուստ ես բերում: Ըտենց բան մեննկ էն Հանդեն կա: Կէթաս էն Հանդեն: Մամես վաթսուն տարի հառեչ մեռեր ա, մատնիքը մատն ա, մամեյիս մատնիքը կրբերես, պապեյիս դայլանը:

Տղեն ասավ.—Թաքավորն ապրած կենա, ընդոնք վաթսուն տարի հառեչ են մեռե, որ բերեմ, դու չես տեսե, չես ճանչնա, կասես՝ ըտոնք չեն:

Թաքավորն ասավ.—Ըտոնք շինող ուստեն իրեք խատ ա շինե, մեկը՝ պապեյս, մամեյս խետ ենք թաղե, մեկը՝ խորս, մորս խետ, մեկն էլ մացեր ա ընձի ու իմ կնգան, բե՛ր, կըղնենք հիրար կողի, ես կըճանչնամ:

Տղեն էլի փոր-փոշման էկավ կնգա մոտը:

Կնիկն ասավ՝ մի՛ վախեցի:

Տղեն վեր կացավ գնաց գոնքաջի յանը:

Ձոնքաջը դուռը բաց ա անում, տղեն ներս ա մտնում էն Հանդեն:

Ձոնքաջը տղին ասում ա.—Քանի չես խասե էն Հանդի վերչը, կէթաս: Թաքավորի պապեն ու մամեն էն Հանդի վերչի քունջը պարկուկ են:

Տղեն գնաց, տեսավ մե ջաղաչ ա բանում, ջաղճփանը բոքոնները շարեր ա թևը, ալրտունը լինքը ալուր, հինքը ասում ա.—Վայ, անոթի մեռա, անոթի վառվա:

—Անոթի մեռար, խա'ց ճե, բոքոնները թևիցս կախուկ
ա,—ասում ա պառվի տղեն:

Ջաղճփանն ասում ա.—Գնա', արի', ետո կասեմ:

Տղեն էթում ա, էթում, տենում ա մե խաց թխող կնիկ:

Լոչերը թունդրից խանում ա, փռում ա, ասում ա.—Վա՛յ, անո-
թի մեռա, էս ինչ տեսակ արչարք ա, էս ինչ տեսակ օրենք ա էս
Հանդի օրենքը:

Տղեն ասում ա.—Լոչերը փոեր ես, ճե'ր, ո՞վ ա խանգարում.
Թեա Հո բռնող չըկա, մարե:

Խաց թխողն ասում ա.—Գնա', արի', ետո քո պատասխանը կը-
տամ:

Տղեն էթում ա, էթում, պատահում ա մե կնգա:

Կնիկը ծծերը կախեր ա թունդիրը, ասում ա.—էրվա վառվա,
եփ բղի ազատվեմ էս տանջանքից:

Տղեն ասում ա.—էրվար, վառվար, թունդրից Հելի', Հընչե՞ս
կախվե:

Կնիկն ասում ա.—Գնա', արի', պատասխանտ կըտամ:

Տղեն էթում, խասնում ա մե դաչտ, տենում ա էրկու եզ:

Մեկը կանանչ տեղն արածում ա, մեկը չոր տեղը կայնուկ
դողում ա, անոթի-ծարավ, էնքան ա առողջե, մնացեր ա կաչին ու
օսկոռը:

Տղեն էս եզանը քշում ա, ասում ա.—Դու էլ գնա էն կանանչ
տեղը արածա', Հնյվա՛ն, Հընչի՞ ես անոթի ծարավ կայնե, մեխկ ես:

Եզը մարթկային լիզվով ասում ա.—Գնա', ե'տ արի, պատաս-
խանտ կըտամ:

Տղեն էթում ա, տենում ա էրկու կառկառ մե կոտի վրեն կովում
են:

Տղեն ասում ա.—Չոր կոտ ա, մեկտ վերցրե'ք, Հընչե՞ք կովում:

Կառկառներից մեկն ասում ա.—Հըլա՛ էն Հանդի վերչ չես խա-
սե, գնա', արի', կասենք:

Տղեն գնում ա, գնում, խասնում ա թաքավորի պապկի ու մամկի
գերեզմանի դռանը: Որ խասնում ա, դուռը Հիրան-Հիրան բացվում
ա: Տղեն ներս ա մտնում, տենում ա թաքավորն էլ, թաքուհին էլ
անչարժ պարկուկ են:

Տղեն, որ տենում ա, ասում ա.—Թաքավո'ր, քո թոռը ընձի
Հղրկեր ա, որ քո դայլանը տանեմ, թաքուհու մատնիքը, Հիրան
տամ, ուզում ա:

Թաքավորը խաց, նիյաթները կախեց, պառվի խետ խոսացին,
ետո տղին պատասխան տվեց.—Ա՛՛ո, բալա', էրկուսն էլ տա'ր:

Մենք էս Հանդեն ենք դառցե խող, էս էլ մեզի կամ չեն տենում, Հի-րանք էլ ընդե դառնան խող ու մոխիր:

Իմալ էս խոսկերն ասավ, դուժին փակվավ:

Տղեն ետ դառցավ, էկավ կառկառների մոտ:

—Դե ջուղա՛ր տվեք, —ասավ կառկառներին, —ես գացի էն Հանդի վերչ ու էկա:

Սև ջոչ կառկառն ասավ. —Ինչ ասեմ, էս կոտը, որ կա, իմ քուրն ա, ըստու էլ կնիկն էր: Սաղ ժամանակ էնքան ծեծկեց, չունքի սատկավ: Հիմի Հինքն էլ ա սատկե: Ես քվորս տեր եմ կայնե, որ թաղեմ, մացեր ա կոտը, էսի տեր ա կայնե, թե. «Կոտը իմ կնգան ա, ես պտի տանեմ», ըտու խըմար էլ կովում ենք:

Տղեն ասում ա. —Կոտը կըխասանի քվորը, որ տանա, թաղա, թե չէ որ մարթը տանա, էս Հանդեն էլ կըծեծկա:

Մարթը թողում էթում ա, տղեն դուս ա գալում թե չէ, դուռը փակվում ա:

Գնում, խասնում ա եզներին:

Ասում ա. —Դե պատասխա՛ն տվեք, ի՞նչն ա պաճառը, որ էս խեխճ եզը չոր տեղն ա մնացե:

—էն աշխարհում էտ եզանը լավ ին պախում, ամեն օր կուսպ ին տալում, իմ երթն էլ Հիմի ա, —ասաց կանանչ տեղում արածող եզը ու պոչը քցեց մեշկի վրեն:

Տղեն գնաց, Հասավ էն կնգան, որ ծծերը կախել էր թունդիրը ու ասում էր՝ վայ, էրվա, խորովվա:

էս կնիկն ասավ. —Ես էս սուրփ թունդիրը ամեն անքամ էրեխի կեղտոտ չորով ի փարատում, ետո խաց թխում, ըտու խըմար էլ մրկա էրվում, վառվում եմ, չեմ կանում թունդրից գատնա:

Գալում խասնում ա էն կնգան, որ խաց էր թխում ու ասում էր՝ վայ, անոթի մեռա:

—Դե ջուղա՛ր տու, Հրնչի՞ խաց ես թխում ու անոթի ես:

Կնիկն ասավ. —Ինչ ջուղաք տամ: Հառաչ ես խացթուխ ի: Ուսցը թխում, փռում ի: Իչքան ախկատ էր գալում, խաց չի տալում, ասում ի. «Գնա՛, դո՛ւ էլ աշխատա»: Մարթիք խացը տենում ին, խոտն Հրնգնում էր քթերը, էթում ին, Հիմի էլ ընձի չեն տալում:

Գնում խասնում ա ջաղճփանին:

Ջաղճփանն ասում ա. —Ես Հառաչ էլի ջաղճփան ի: Ախկատը գալում էր ջաղաչը, փայ չի տալում, Հիմա էլ ես եմ անոթի: Բոքոնները թևա քցած ա, իրավունք չունեմ ուտելու: Որ մե կտոր ուտեմ, տասը տեղով գլխիս կըտան:

Աչկա մնացեր ա էս լավ բոքոնների վրեն:

Տղեն էկավ, խասավ գոնքաջի դռանը, ասավ.—Ա՛յ մեր, էկա, դուռը բա՛ց:

Ջոնքաջը դուռը բացեց, փեսի հերեսները պաչեց, ճամբու դրեց ու ասավ.—Փնա՛, տղա՛ ջան, փորցանքից պրծար: Ախճկաս բարև տար, երգիրը լավ կառավարա՛:

Տղեն էկավ, մատնիքն ու դայլանը բերեց, դրին հիրար կող, տեսան դուզ ա, տղեն գացեր ա էն հանդեն ու եկեր ա:

Թաքավորը խառցուց.—Բա պապս ու տատս բան չասի՞ն:

—Ասին, ոնց չասին,—պատասխանեց տղեն:—Պապտ ասավ. «Մենք էստեղ խող ենք դառցել, էտ անիծածը չի կամենում, որ էտ մե բանն է՞լ մեզի մնա, հինքն էլ մեր նման խող դառնա»:

Տղեն էսենց ասավ, թե չէ, թաքավորի ջանը կրակ հընգավ, սկսեց վառվել: Վառվավ, մնձուր դառցավ, հընգավ պոլին:

Վազիր, վաքիլ, սինոթները, ժողովուրթը տեսան, որ էս տղեն բարի ու խելոք տղա յա, բերին դառցրին թաքավոր:

Թաքուհին էլ էկավ պալատը: Նրանք խասան հիրանց մուրագին, դուք էլ խասնեք ձեր մուրագին, ես էլ ինվալիդ բիձա մարթ եմ, ձեր խովեն կաբրեմ:

